ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

11.07.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 567-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԻՑ ԷԴՈՒԱՐԴ ԲԱԼԱՅԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 28-ի N-23-Ա և N-24-Ա որոշումներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի բնակիչ Էդուարդ Բալայանի (մտից 1872) դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Խնձորեսկ գյուղի վարչական սահմաններում գտնվող գյուղամերձ արոտավայրից (կադաստրային ծածկագիր՝ 09-045-0103-0028-ից) 0,5 հա մակերեսով, 1 (մեկ) տարի ժամկետով օգտագործման իրավունքով տրամադրել Գորիս քաղաքի բնակիչ Էդուարդ Բալայանին՝ տարեկան վարձավճար սահմանելով 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

2. Համաձայն գործող կարգի Էդուարդ Բալայանի հետ կնքել արոտավայրից օգտվելու պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ**

2025թ. հուլիսի 11

ք. Գորիս